



«Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպություն Երևան, Բուզանդի  
1/3, 8-րդ հարկ, հեռ:(37410) 563363, 580219,

E-mail: [info@hetq.am](mailto:info@hetq.am), URL : [www.hetq.am](http://www.hetq.am)

-----  
Լոռու մարզպետ Անդրեյ Ղուկասյանին  
«Հետք» էլեկտրոնային թերթի լրագրող Սեդա Ղուկասյանից  
Հեռ:055814042,  
Էլ-փոստ:[Ghukasyansed@gmail.com](mailto:Ghukasyansed@gmail.com)

## Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի՛ պարոն Ղուկասյան,

ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 9-րդ, 12-րդ հոդվածների՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին:

1.Այս պահի դրությամբ քանի ծառայողական ավտոմեքենա է հաշվառված գերատեսչությունում:

2.Քանի ծառայողական ավտոմեքենա է կրճատվել 2018-ի մայիսից մինչև այս տարվա մայիս, այդ կրճատումների արդյունքում որքան գումար է տնտեսվել, ինչ է եղել գերատեսչության կրճատված ծառայողական ավտոմեքենաների հետ, ունե՞ք տեղեկություն, թե կրճատված ավտոմեքենաների վարորդները ինչ աշխատանքի են անցել, կամ անցել են այլ աշխատանքի, թե ոչ:

3.Ինչ մակնիշի են գերատեսչության ծառայողական ավտոմեքենաները, խնդրում եմ բացվածքով նեկայացնել, թե գերատեսչության որ վարչության պետն է կամ որ պաշտոնյան է, որ այժմ ունի ծառայողական մեքենա և ինչ մակնիշի մեքենաներ են

դրանք, ներկայացնել այդ մեքենաների ընդհանուր թիվը, ծախսած վառելիքի չափն ու գումարը մեկ ամսվա կտրվածքով:

4.Խնդրում եմ տրամադրել նաև տեղեկություն նաև, թե որքան ավտոմեքենա ուներ գերատեսչությունը նախորդ տարվա մայիս ամսվա տվյալներով:

Խնդրում եմ հարցերին պատասխանել առանձին-առանձին:

Տեղեկացնում եմ նաև, որ նմանատիպ հարցում ուղարկում ենք գրեթե բոլոր գերատեսչություններին:

(Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար):

Կանխավ շնորհակալ եմ՝

Հարգանքով՝ Սեդա Ղուկասյան 04.05.2019

